2021, № 3, 61-70 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.3.061

ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ. ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԴՐՈՒՄ

ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Հոդվածում վերլուծվում և ըստ վերջնարդյունքի՝ պետության անվտանգության և ինքնուրույնության վրա ազդեցության, խմբավորվում են մեծ տերությունների նկատմամբ փոքր պետությունների անվտանգության մի շարք ռազմավարություններ: Առաջարկվում է փոքր պետությունների արտաքին անվտանգության բոլոր ռազմավարությունները բաժանել չորս խմբի՝ համադրման, հակադրման, ինքնաբացառման և կցորդման: Մասնավորապես, քննվում են առաջին երկու խմբերում դասվող ռազմավարությունների շարքերն ու դրանց հիմնական բնութագրիչները, վեր են հանվում այդ ռազմավարությունների կիրառման հիմնապայմանները: Եզրակացության մեջ ներկայացվում են այդ երկու խումբ ռազմավարությունների հիմնական տարբերություններն ու ընդհանրությունները:

Բանալի բառեր – *փոքր պետություն, մեծ տերություն, արտաքին քաղաքականություն, անվտանգություն, ռազմավարություն, դաշինք*

Ներածություն

Փոքր պետությունների (այսուհետ՝ ՓՊ) արտաքին քաղաքական վարքի յուրահատկությունները և դրանց հիմնապատճառները հարկ է քննարկել այդ վարքի գործնական դրսևորումների՝ արտաքին անվտանգության ռազմավարությունների համատեքստում: Մասնագիտական գրականության մեջ ՓՊ-ներին վերագրվում են մի շարք ռազմավարություններ, որոնց մի մասը (օրինակ՝ չեզոքությունը կամ ենթադաշնակցումը) հատուկ է միայն ՓՊ-ներին, իսկ մյուս մասն էլ (օրինակ՝ անհատական և դաշինքային բալանսավորումը) «ունիվերսալ» է՝ բնորոշ է թե. ՓՊ-ներին, թե՛ միջին և մեծ տերություններին:

Մեր հոդվածներից մեկում խոսել ենք ՓՊ-ների արտաքին քաղաքական վարքի վրա արտաքին (միջազգային-տարածաշրջանային համակարգի կառուցվածքի, կարգի և այլն) և ներքին (կառավարող էլիտայի աշխարհայացքի, կողմնորոշումների, պետության սոցիալ-տնտեսական զարգացածության և այլն) գործոնների որոշիչ ազդեցության մասին (Գալստյան 1, 2019:8-14): Եվ տրամաբանական է, որ նույն գործոններն են ընկած նաև ՓՊ-ների՝ արտաքին քաղաքականության ռազմավարությունների ընտրության հիմքում:

Հնագույն ժամանակներից ի վեր ՓՊ-ների արտաքին անվտանգության առանցքային խնդիրները կապված են մեծ տերությունների հետ: Ուստի տրամաբանական է այդ ռազմավարությունները քննել մեծ տերությունների հետ հարաբերություններում ՓՊ-ների ինքնադիրքավորման տեսանկյունից: Ընդհանրապես, ինչպես նկատում է Նիկոլա Կոնտեսսին, մեծ տերությունները ՓՊ-ների համար և՛ հնարավորություն են, և՛ սպառնալիք: Հնարավորություն են, քանի որ նրանց հետ սերտ գործակցությունը կարող է դառնալ օգնության, հովանավորության, հեղինակության ու այլ առավելությունների աղբյուր: Բայց նրանք նաև սպառնալիք են, քանի որ հզորության ակնհայտ անհամամասնությունները ՓՊ-ներին դարձնում են մեծերի կողմից խիստ խոցելի առանձին ոլորտներում կամ ընդհանրապես կախվածության, անգամ գերակայության նկատմամբ (Contessi, 2015:301): Ինչպե՞ս են կառուցում ՓՊ–ներն իրենց ռազմավարությունները մեծ տերությունների հետ հարաբերություններում:

Ըստ բնորոշման՝ փոքր պետություններն ունակ չեն արմատապես փոխելու իրենց անվտանգության միջավայրը*, ուստի նրանք որդեգրում են ռազմավարություններ, որոնք պետք է լուծեն երկու առանցքային խնդիր՝ 1. չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել արտաքին միջավայրից (նախևառաջ՝ մեծ տերություններից) բխող սպառնալիքները և 2. ապահովել մեծ տերություններից առավելագույն հնարավոր ինքնավարություն արտաքին ու ներքին հարցերում: Առաջին խնդիրն ուղղակիորեն վերաբերում է ՓՊ-ի՝ որպես համակարգի գոյապահպանմանը, որի ձախողումը կարող է հանգեցնել ՓՊ-ի վերացմանը, իսկ երկրորդը վերաբերում է ՓՊ-ի գործառությանը՝ կարճա- և միջնաժամկետ հեռանկարում չսպառնալով դրա գոյությանը: Այդ իսկ պատճառով հնարավոր է՝ հանուն առաջին խնդրի՝ ՓՊ-ն զիջումների գնա երկրորդ խնդրին վերաբերող հարցերում: Մեր համոզմամբ՝ հենց այդ երկու խնդիրներին արձագանքելու կառուցվածքային կարողությունների և աշխարհայացքային պատկերացումների տարբերություններն են այն գլխավոր պատճառները, որ մենք տեսնում ենք ՓՊ-ների անվտանգության ռազմավարությունների մեծ բազմազանություն թե՛ տարածաշրջանային անվտանգության տարբեր համալիրներում, թե՛ միևնույն համալիրի ներսում:

Մասնագիտական գրականության մեջ կան ՓՊ-ների արտաքին անվտանգության ռազմավարությունների մի քանի համախմբեր՝ կազմված տարբեր հիմնասկզբունքներով: Այսպես՝ Թալուկդեր Մոնիրուզամանը նշում է սպառնացող մեծ տերությունների ռազմական զսպմանն ուղղված չեզոքության, չեզոքացման, չմիացման, ուժերի բալանսավորման և որակական գերազանցության ռազմավարությունները (Talukder, 1982), Լե-

* Ազդել նրանք (հատկապես ուժեղ փոքրերը, ինչպես օրինակ՝ Սինգապուրը) անշուշտ կարող են և հենց այդ պատճառով էլ հայտնվում են մեծ տերությունների ուշադրության կենտրոնում, որոնք կձգտեն կա՛մ չեզոքացնել այդ ազդեցությունը, կա՛մ օգտագործել դա ուժային բալանսի իրենց հաշվարկներում:

լա Չիկովանին՝ հզորության ամրապնդմանն ու սեփական նշանակության բարձրացմանն ուղղված ռազմական կարողությունների ամրապնդումը և տնտեսական անկախությունը՝ որպես ներքին ջանքեր, և չեզոքությունը, դաշինքը, չմիացումը և հավաքական անվտանգությունը՝ որպես արտաքին ջանքեր (Chikovani, 2010), Ֆրենսիս Դոմինգոն՝ միջազգային համակարգում գոյատևմանն ուղղված միջազգային կազմակերպություններին անդամակցությունը, սեփական ուժերին ապավինելը (self-reliance), դաշինք կազմելը և ինքնաապահովագրումը (hedging) (Domingo, 2014: 43-59), Նիլս Ամստրապն իր հերթին նշում է փոքր պետության անվտանգության հետևյալ ռազմավարությունները՝ չեզոքություն, դաշինք, անդամակցություն միջազգային կազմակերպությանը և չմիացում (un-aligned) (Amstrup, 1976:163-182): Որոշ հեղինակներ էլ հիշատակում են վերոնշյալ առանցքային խնդիրների լուծմանն ուղղված դաշինք կազմելու, ռազմավարական ինքնաապահովագրման, չեզոքության և «ապաստանի» ռազմավարությունները (Vaicekauskaitė, 2017: 7-15):

Ընդհանրապես, ըստ մեծ տերության հետ փոխազդեցության վերջնարդյունքի՝ ՓՊ-ների արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունները, կարծում ենք, կարելի է բաժանել չորս խմբի՝ համադրման, հակադրման, ինքնաբացառման և կցորդման:

Ստորև նպատակ ունենք *վեր հանել համադրման և հակադրման խմբերին պատկանող ռազմավարությունների հիմնարար հատկանիշները*: Այդ նպատակով փորձենք՝ 1. *հատկանշել այդ երկու խմբերը՝ ինչ վերջնարդյունք և ինչ պայմաններ են դրանք ենթադրում,* 2. *մասնագիտական գրականության մեջ ՓՊ-ներին վերագրվող ռազմավարություններից առանձնացնել, բնութագրել ու դասակարգել այդ խմբերին համահունչ ռազմավարությունները:*

Համադրման ռազմավարություններ

Համադրման ռազմավարությունների վերջնարդյունքը մեծ տերության (տերությունների) հետ երկկողմ ու բազմակողմ համագործակցության միջոցով նրա (նրանց) հետ ուղղակի առճակատման բացառումն է: Մասնագիտական գրականության մեջ հիշատակվում են այդպիսի նպատակադրություն ունեցող մի շարք ռազմավարություններ: Դրանցից է ***բազմակողմանիությունը*** (Multilateralism) կամ ***բազմավեկտորությունը*** (Multi-Vectorism), որը ՓՊ-ների համար թե՛ սեփական ազդեցության տարածման, թե՛ ավելի մեծ տերությունների ազդեցության սահմանափակման միջոց է: Բազմավեկտորությունը բնորոշվում է որպես պետության փոխշահավետ հարաբերություն իր բոլոր գործընկերների հետ՝ *բացառելով նրանցից որևէ մեկի չափազանց արտոնյալ լինելը մյուսների համեմատ*: Այն մեկնաբանվում է որպես պետության ձգտում՝ զարգացնելու պրագմատիկ հարաբերություններ և ապահովելու *ճկունություն* մրցակցող արտաքին գործընկերների հետ հարաբե-

րություններում, պահպանելու որոշակի *ինքնավարություն* ներքին ու արտաքին քաղաքականության մեջ (Գալստյան 2, 2019: 224): Ինչպես արդեն նկատել ենք, որոշ հեղինակներ բազմակողմանիությունը համարում են ***փոխհամադրման*** (Co-Alignment) մասնավոր ձև, որը ենթադրում է մրցակցող մեծ տերությունների համարժեք ներգրավում ՓՊ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում: Այդ ռազմավարության վերջնանպատակների թվում նշվում են ՓՊ-ի համար ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտներում որևէ մեծ տերության գերակայության՝ նրա կողմից թելադրանքի, հարկադրանքի բացառումը և, այդպիսով, ՓՊ-ի ռազմավարական ինքնավարությունն ու ինքնիշխանությունը պաշտպանելը, ինչպես նաև ՓՊ-ի սոցիալ-տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման համար արտաքին աջակցություն ապահովելը (Galstyan, 2019:182): Կոնտեսսիի ձևակերպմամբ՝ փոխհամադրման քաղաքականությունը համակցում է, մի կողմից, կորուստները (որոնք կարող են ի հայտ գալ, օրինակ, որևէ մի մեծ տերության գերիշխանության հաստատման արդյունքում) բացառելու շարժառիթը և ունի ինքնապահպանման ու արդեն ձեռք բերված արժեքները (օրինակ՝ ինքնիշխանությունն ու ինքնուրույնությունը) պաշտպանելու նպատակ (*բալանսավորում*), իսկ մյուս կողմից՝ օգուտ ստանալու (օրինակ՝ մեծ տերության աջակցությունը) շարժառիթը և ունի ցանկալի արժեքներ ձեռք բերելու նպատակ (*ենթադաշնակցում*): Նրա կարծիքով, փոխհամադրման միջոցով փոքր պետությունը կարող է բազմազանեցնել իր խոշոր գործընկերների ցանկը՝ այդ կերպ կանխելով նրանցից որևէ մեկի գերիշխանությունն իր նկատմամբ: Դրա մեխանիզմը «*խնդիրների բաժանումն*» (Issue Splitting) է՝ արտաքին աջակցության կարիք ունեցող խնդիրների դաշտի հատվածավորումը: Ըստ այդմ՝ ամեն հատված կարող է «աճուրդով վաճառվել» տարբեր «գնորդների», որպեսզի մեծ տերություններից ոչ մեկը չկարողանա ամբողջությամբ գերակայել ՓՊ-ի քաղաքականության կամ տնտեսության որևէ ոլորտում: Կոնտեսսին փոխհամադրման ռազմավարությունը բնութագրական է համարում Ադրբեջանի (Ռուսաստանին, Թուրքիային, ԱՄՆ-ին և Իսրայելին ներգրավելու միջոցով), Ղազախստանի (Ռուսաստանին, Չինաստանին, ԵՄ-ին ու ԱՄՆ-ին ներգրավելու միջոցով) և Ուզբեկստանի (Ռուսաստանին և ԱՄՆ-ին ներգրավելու միջոցով) արտաքին քաղաքականության համար (Contessi, 2015:300-306):

Նկատենք, որ Կոնտեսիի այս հայեցակարգը շատ նման է ***ինքնապահովագրման*** *(Hedging)* ռազմավարությանը, որով հաճախ բնութագրվում է Հարավարևելյան Ասիայի ՓՊ–ների ռազմավարությունը Չինաստանի և ԱՄՆ-ի (Goh, 2005), իսկ երբեմն՝ անգամ Ադրբեջանի քաղաքականությունը Ռուսաստանի (Valiyev, Mamishova, 2019:269-291) նկատմամբ: Չըն-Չիվը Քուեքն այդ ռազմավարությունը բնորոշում է որպես երբեմն հակասող և հակադրվող քաղաքական որոշումների հա-

մակցություն, որը փոքր կամ երկրորդային պետությունները կիրառում են անորոշ և ռիսկային միջավայրում՝ ի պատասխան մրցակցող մեծ տերությունների ակնկալիքների: Ինքնաապահովագրումն անհրաժեշտաբար ենթադրում է երեք պայման՝ մրցակցող տերություններից որևէ մեկի նկատմամբ կողմնապահության բացառում, հակասական և հակադիր որոշումների ընդունման պրակտիկա, հանուն օգուտի հակադիր գործողությունների օգտագործում՝ միաժամանակ ունենալով գործողությունների «պահուստային» տարբերակ (Kuik, 2016:5): Ինքնաապահովագրումը, ըստ նրա, ունի հինգ բաղադրիչ՝ 1. տնտեսական պրագմատիզմը՝ ձգտելով առավելագույն տնտեսական օգուտ ստանալ մեծ տերության հետ առևտրատնտեսական հարաբերություններից, եթե անգամ նրանց միջև կան քաղաքական տարաձայնություններ, 2. կապակցող ներգրավումը՝ ձգտելով ընդլայնել ու շատացնել մեծ տերության հետ կապերը՝ նրա որոշումների ընդունման վրա ազդեցություն ստանալու նպատակով, 3. սահմանափակ ենթադաշնակցումը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում մասնակիորեն ընդունելով մեծ տերության գերակայությունը՝ առանց նրանից լիարժեք կախվածության մեջ ընկնելու, 4. մեծ տերության գերակայության բացառումը՝ այլ մեծ տերություններին համագործակցության մեջ ներքաշելու և սեփական դիմադրողունակությունն ամրապնդելու միջոցով և 5. անուղղակի բալանսավորումը՝ անվտանգային անորոշությունները մեղմելու նպատակով զարգացնելով համագործակցությունը մեծ տերության հետ և զուգահեռաբար զարգացնելով սեփական կարողությունները ռազմական ոլորտում (Kuik, 2008:167-171):

Մրցակցող մեծ տերություններին համագործակցության դաշտ բերելու կամ ***համաձայնության*** (Accommodation) ռազմավարությունը ևս, ըստ Ռոբերտ Ս. Ռոսի, թույլ է տալիս ՓՊ-ին, մի կողմից, հրաժարվել մեծ տերությունների նկատմամբ կիրառվող ավանդական ռազմավարություններից (բալանսավորում, չեզոքություն, ենթադաշնակցում), մյուս կողմից, նվազեցնել անվտանգության ռիսկերն այդ տերությունների հետ անհամաչափ փոխհարաբերություններում (Galstyan, 2019:182): Ինքնաապահովագրման և համաձայնելու ռազմավարությունների տարբերությունն այն է, որ, ինչպես նկատում է Դեյվիդ Կանը, եթե ապահովագրման ռազմավարությունն ավելի մոտ է բալանսավորմանը, ապա համաձայնելու ռազմավարությունը՝ ենթադաշնակցելուն (Kang, 2007:53-54):

Հակադրման ռազմավարություններ

ՓՊ–ների արտաքին անվտանգության երկրորդ՝ հակադրման խմբի ռազմավարությունների վերջնանպատակն է ստիպել սպառնացող մեծ տերությանը (տերություններին) հրաժարվել ՓՊ-ի նկատմամբ ագրեսիվ գործողություններից, նրա նկատմամբ գերակայություն ստանալու մտադրությունից: Եթե ՓՊ–ն միայնակ՝ բացառապես սեփական

ռեսուրսներով ի զորու չէ ապահովելու այդ արդյունքը, նա ստիպված է որդեգրել ***դաշինքային ռազմավարություն***՝ դաշնակցել համանման նպատակ ունեցող այլ պետությունների հետ (կամ դաշինքի միջոցով ապահովել կոշտ բալանսավորում)՝ որևէ մի մեծ ուժի (կամ դաշինքի) սպառնալիքից մեկ այլ մեծ ուժի (կամ դաշինքի) պաշտպանությունն ստանալու նպատակով:

Սթիվեն Ուոլթի բնորոշմամբ, ***դաշինքը*** երկու կամ ավելի ինքնիշխան պետությունների միջև անվտանգության հարցերով ֆորմալ կամ ոչ ֆորմալ հարաբերություն է, որը ենթադրում է որոշակի փոխադարձ պարտավորություններ և օգուտների փոխանակում (Walt, 1985:1): Ռոբերտ Լ. Ռոթշտայնը և Հաքան Վիբերգը նշում են ՓՊ–ի դաշինքի երեք հնարավոր տարբերակ՝ երկկողմ դաշինք մեծ պետության հետ, դաշինք այլ ՓՊ-ների հետ, բազմակողմ դաշինք փոքր և մեծ պետությունների հետ (Amstrup, 1976:171, Wiberg, 1996:36), իսկ Մելվին Սմոլը և Դեյվիդ Սինգերը՝ փոխադարձ պաշտպանություն, չհարձակման դաշնագիր և անտանտ (Small, Singer, 1969:261):

Դաշինքների ձևավորման պատճառների քննությունը թողնելով հետագային՝ այստեղ միայն նշենք, որ ՓՊ-ների կողմից դաշինքային ռազմավարություն ընտրելը, մեր համոզմամբ, լավագույնս բացատրում է *սպառնալիքի բալանսավորման տեսությունը*: Վերջինիս համաձայն՝ հենց սպառնացող Ա պետությանը կամ պետությունների խմբին զսպելու, բալանսավորելու նպատակով է Բ պետությունը կազմում դաշինք (Walt, 1985:5-6)՝ ակնկալելով, որ իր դեմ ռազմական գործողությունների դեպքում դաշնակիցներից կստանա ռազմական և դիվանագիտական աջակցություն (Dwivedi, 2012:224): Սակայն, ինչպես պնդում են Ֆոլկեր Քրաուզեն և Դեյվիդ Սինգերը, դաշինքին անդամակցելու ՓՊ–ների շահագրգռվածությունը պայմանավորված է ոչ միայն ռազմական անվտանգության ամրապնդման, այլ նաև ոչ ռազմական օգուտներ (արտաքին առևտրի աճ, կառավարող ռեժիմին աջակցություն) ստանալու ակնկալիքով (Krause, Singer 2001:21-22):

Մի շարք հեղինակներ պնդում են, որ ՓՊ-ների դաշինքային ռազմավարությունը ավելի լավ մեկնաբանում են ոչ թե դաշինքի ավանդական տեսական մոտեցումները, այլ ***դաշինքային ապաստանի*** (shelter) տեսությունը: Վերջինիս հիմնասկզբունքներն են՝

1. ՓՊ–ներն արմատապես տարբերվում են մեծերից և, հետևաբար, որոշումների ընդունման և գործողությունների ժամանակ կիրառում են մեծ տերություններից տարբերվող տրամաբանություն:

2. ՓՊ–ների համար դաշինք ձևավորելն ունի ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին դրդապատճառներ:

3. ՓՊ-ներն ունակ են շահել դաշինք կազմելուց և համեմատաբար ավելի մեծ օգուտ ստանալ, քան մեծ տերությունները:

4. Գոյատևելու և բարգավաճելու համար ՓՊ-ներն ունեն քաղա-

քական, տնտեսական, մշակութային և անվտանգային ապաստանի կարիք, որն էլ մեծ տերության հետ ՓՊ-ների դաշինք կազմելու գլխավոր խթանն է:

5. Դաշինքային ապաստանը ՓՊ-ներին հնարավորություն է տալիս դաշինքների միջոցով բացառելու մեկուսացումն արտաքին աշխարհից, և դա կարող է նշանակալի սոցիալ-շակութային ազդեցություն ունենալ ՓՊ վրա:

6. Դաշինքին անդամակցությունը կարող է նշանակալիորեն փոխակերպել ՓՊ- թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականությունը, որն էլ, իր հերթին, ՓՊ- համար լրացուցիչ «վճար» է դաշինքին անդամակցության դիմաց (Bailes et all, 2016:5-7):

Ըստ այդմ հեղինակները նշում են ՓՊ–ների խոցելիության երեք ոլորտներ և դրանց համապատասխան դաշինքային ապաստաններ՝ քաղաքական (ռազմական պաշտպանություն, դիվանագիտական աջակցություն, միջազգային նորմեր և կանոններ), տնտեսական (ֆինանսատնտեսական աջակցություն, մուտք մեծ շուկաներ) և սոցիալական (ճանաչում, մտավոր ուժի և տեխնոլոգիաների ներհոսք) (Thorhallsson, Bailes, 2017:52-54): Որպես գործնական օրինակ՝ հեղինակները նշում են հյուսիսեվրոպական պետությունների փոխազդեցությունը ԱՄՆ/ՆԱՏՕ-ի և Եվրոպական միության հետ:

Իսկ ի՞նչ անել, եթե գերակայող պետությանը կամ պետություններին խմբին ռազմական միջոցներով «կոշտ» բալանսավորել հնարավոր կամ արդյունավետ չէ: Այսպիսի իրավիճակում կարող է կիրառվել ոչ ռազմական միջոցներով (տնտեսական, դիվանագիտական, ինստիտուցիոնալ) ***«փափուկ» բալանսավորում***: Վերջինս, ըստ հեղինակների, ենթադրում է գործողություններ, որոնք ուղղակիորեն մարտահրավեր չեն նետում գերիշխող տերության ռազմական գերակայությանը, սակայն նպատակ ունեն ոչ ռազմական միջոցներով խափանել այդ տերության պլանավորած ռազմական մտադրությունները (Pape, 2005:10): Ավելին, որոշ հեղինակներ նշում են փափուկ բալանսավորման տարատեսակներ՝ թշնամի տերության նկատմամբ և բարեկամ տերության նկատմամբ (Whitaker, 2010:1111), կոնֆլիկտ, որը ծագում է անհամատեղելի քաղաքական նախապատվություններից, և կոնֆլիկտ, երբ, չնայած ընդհանուր տեսակետի առկայությանը, թույլ պետությունը մերժում է համաձայնությունը մեծի հետ: Վերջին դեպքը հնարավոր է, երբ թույլ կողմն ընդունում է ուժեղ կողմի երկարաժամկետ նպատակները, բայց ոչ դրանց ուղղված կարճաժամկետ ռազմավարությունները ***(«ռազմավարական չհամագործակցություն»)***: Որպես դրա գործնական օրինակ նշվում է իրաքյան ռազմարշավի ժամանակ ԱՄՆ–ի հետ համագործակցելուց նրա ավանդական որոշ դաշնակիցների հրաժարվելը (Kelley, 2005:153-173):

Եզրակացություն

Ամփոփելով վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ

- մեծ տերությունների նկատմամբ ՓՊ-ների կողմից կիրառվող ռազմավարությունների համադրման և հակադրման խմբերն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Գլխավոր ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ ենթադրում են ՓՊ-ի ակտիվ փոխազդեցություն մեծ տերությունների հետ, և երկուսն էլ կիրառելի են մրցակցային (երկու և ավելի մրցակցող մեծ տերություն ներառող) համակարգերում: Բայց եթե համադրման խումբը ենթադրում է պրագմատիկ համագործակցություն մեծ տերությունների հետ, ապա հակադրման խումբը՝ հակադրություն սպառնացող մեծ տերությանը:
- ՓՊ-ներին վերագրվող ռազմավարություններից համադրման խմբին են պատկանում բազմավեկտորությունը կամ բազմակողմանիությունը, փոխհամադրումը, ինքնաապահովագրումը և համաձայնությունը, իսկ հակադրման խմբին՝ ավանդական դաշինքը, դաշինքային ապաստանը, «փափուկ» բալանսավորումն իր «ռազմավարական չհամագործակցության» տարատեսակով:
- Համադրման ռազմավարությունների միջոցով ՓՊ-ն ձգտում է բացառել որևէ մեծ տերության գերկայությունն իր նկատմամբ՝ իր համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում երկու և ավելի մեծ տերություններ ներգրավելու, նրանց հետ համաժամանակյա փոխգործակցության և, այդպիսով, նրանց փոխբալանսավորելու միջոցով: Այդ կերպ համադրման ռազմավարությունները ՓՊ-ի համար ապահովում են անվտանգության և ինքնուրույնության, մանևրելու առավելագույնս հնարավոր մակարդակ: Այսպիսի ռազմավարություն կիրառելու համար անհրաժեշտ նվազագույն նախապայմաններն են տարածաշրջանի բազմակենտրոն-մրցակցային կառուցվածքը՝ երկու և ավելի մեծ տերությունների առկայությունը, ինչպես նաև ՓՊ-ի ունակությունը՝ այդ մեծ տերություններին համարժեք չափով ներգրավելու իր համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում համագործակցության մեջ:
- Հակադրման ռազմավարությունները կարող են դաշինքի միջոցով ապահովել ՓՊ-ի առավելագույն հնարավոր անվտանգությունը, սակայն անհրաժեշտաբար սահմանափակում են նրա ինքնավարությունը: Օրինակ, դաշինքներին անդամակցության դիմաց ՓՊ-ները «վճարում են» իրենց ինքնավարությամբ՝ դրա նշանակալի մասը զիջելով իրենց մեծ դաշնակիցներին, ինչպես նաև դիվանագիտական ճկունության սահմանափակմամբ*: Ավելին, նկատենք, որ, փորձելով սպառնացող մեծ տերությունից պաշտպանվել հովանավոր մեծ տերության «վա-

* Նկատենք, որ այս դեպքը բնութագրական է *ենթադաշնակցման* ռազմավարությանը, որին առավել մանրամասն կանդրադառնանք հետագա վերլուծություններում:

հանի» տակ, ՓՊ-ն կարող է բախվել այդ մեծ տերությունների մրցակցության թատերաբեմի կամ կռվախնձորի վերածվելու վտանգին:

НАРЕК ГАЛСТЯН – *Типы стратегий безопасности малых государств: сопоставление и противопоставление.* – В статье анализируются и – по принципу их конечного результата, а именно влияния на безопасность и самостоятельность государства, – группируются некоторые стратегии безопасности малых государств в отношении великих держав. Выдвигается гипотеза, что все стратегии малых государств можно объединить в четыре группы: сопоставления, сопротивления, самоисключения и приложения. В частности, даются перечни стратегий и основных характеристик стратегий, которые по своим конечным результатам можно отнести к первым двум группам. Выявляются также основные условия применения этих групп стратегий. В заключении отмечаются основные отличия и общности этих двух групп стратегий.

Ключевые слова: *малое государство, великая держава, внешняя политика, безопасность, стратегия, альянс*

NAREK GALSTYAN – *Types of Security Strategies of Small States: Compilation and Opposition*. – The article analyses and groups some security strategies of small states towards the great powers according to the principle of their final result - the impact on the security and independence of the state. It is hypothesized that all strategies of small states can be grouped into four groups: compilation, opposition, self-exclusion, and application. In particular, a list of strategies and the main characteristics of strategies are given, which, according to their final results, can be attributed to the first two groups. The main conditions for the realization of these groups of strategies are also identified. In conclusion, the main differences and commonalities of these two groups of strategies are noted.

Key words: *small state, great power, foreign policy, security, strategy, alliance*

Օգտագործված աղբյուրների ցանկ

Amstrup, N., 1976. The Perennial Problem of Small States: A Survey of Research Efforts. *Cooperation and Conflict,* 1 June, 11(2), pp. 163 - 182.

Bailes, A. J. K., Thayer, B. A. & Thorhallsson, B., 2016. Alliance theory and alliance 'Shelter': the complexities of small state alliance behaviour. *Third World Thematics: A TWQ Journal,* 2016 August, 1(1), pp. 9-26.

Chikovani, L., 2010. *How to stop the bear: strategy of small states.* Monterey: Calhoun: The NPS Institutional Archive.

Contessi, N. P., 2015. Foreign and Security Policy Diversification in Eurasia. Issue Splitting, Co-alignment, and Relational Power. *Problems of Post-Communism,* Issue 62, p. 299–311.

Domingo, F. C., 2014. The RMA Theory and Small States. *Military and Strategic Affairs,* 6(3).

Dwivedi, S. S., 2012. Alliances in international relations theory. *International Journal of Social Science & Interdisciplinary Research,* 08, 1(8), pp. 224-237.

Galstyan, N., 2019. Armenische Komplementarität: Außenpolitik eines Kleinstaats in turbulenten Zeiten. In: *Politik und Gesellschaft im Kaukasus.* Wiesbaden: Springer VS, pp. 173-192.

Goh, E., 2005. *Meeting the China challenge: The U.S. in Southeast Asian regional security strategies,* Washington: The East-West Center.

Kang, D. C., 2007. *China Rising: Peace, Power, and Order in East Asia.* New York: Columbia University Press.

Kelley, J., 2005. Strategic Non-cooperation as Soft Balancing: Why Iraq was not Just about Iraq. *International Politics,* 42(2), pp. 153-173.

Krause, V. & Singer, J. D., 2001. Minor Powers, Alliances, and Armed Conflict: Some Preliminary Patterns. In: E. Reiter & H. Gärtner, eds. *Small States and Alliances.* New York:

Physica-Verlag Heidelberg, pp. 15-24.

Kuik, C.-C., 2008. The Essence of Hedging: Malaysia and Singapore's Response to a Rising China. *Contemporary Southeast Asia: A Journal of International and Strategic Affairs,* 30(2), pp. 159-185.

Kuik, C.-C., 2016. How do weaker states hedge? Unpacking ASEAN states' alignment behavior towards China. *Journal of Contemporary China,* 25(100), pp. 500-514.

Pape, R. A., 2005. Soft balancing against the United States. *International Security,* 30(1), pp. 7-45.

Small, M. & Singer, J. D., 1969. Formal Alliances, 1816-1965: An Extension of the Basic Data. *Journal of Peace Research,* 6(3), pp. 257-282.

Talukder, M., 1982. The security of small states in the Third World. *Canberra Papers on Strategy and Defence,* Issue 25.

Thorhallsson, B. & Bailes, A. J. K., 2017. Do Small States Need 'Alliance Shelter'? Scotland and the Nordic Nations. In: *Security in a Small Nation: Scotland, Democracy, Politics.* Cambridge: Open Book Publishers, pp. 49-76.

Vaicekauskaitė, Ž. M., 2017. Security Strategies of Small States in a Changing World. *Journal on Baltic Security*, 1 November, 3(2), pp. 7-15.

Valiyev, A. & Mamishova, N., 2019. Azerbaijan's foreign policy towards Russia since independence: compromise achieved. *Southeast European and Black Sea Studies,* February, 19(2), pp. 269-291.

Walt, S. M., 1985. Alliance Formation and the Balance of World Power. *International Security,* 9(4), pp. 3-43.

Whitaker, B. E., 2010. Soft Balancing Among Weak States? Evidence from Africa. *International Affairs,* 86(5), pp. 1109-1127.

Wiberg, H., 1996. Security Problems of Small Nations. In: W. Bauwens, A. Clesse & O. Knudsen, eds. *Small States and the Security Challenge in the New Europe.* London: Brassey's, pp. 21-41.

Գալստյան, Ն. (1), 2019. Փոքր պետությունների արտաքին քաղաքական վարքի հիմնական հատկանիշներն ու պատճառները. *Բանբեր Երևանի համալսարանի, «Միջազգային հարաբերություններ. քաղաքագիտություն»,* № 2(29), էջ 3-16:

Գալստյան, Ն. (2), 2019. *Հայաստանի բազմավեկտոր արտաքին քաղաքականության հայեցակարգը և պրակտիկան,* Եր. ՀՀ ՊԿԱ, էջ 223-236.